ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԲԱՐԵՇՆՈՐՀ ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՐԿԱՒԱԳ ԱԼԹԸՊԱՐՄԱՔԵԱՆ ՈՐ Ի ՖՐԷԶՆՕ, ԱՄՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ համայն հայութեան Ապրուածկառոյց հոգեւոր կենտրոնից գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Սիրելի Վարուժան սարկաւագ, ճանաչում ենք Ձեզ եւ Ձեր ապրուածասէր ընտանիքին ու քաջածանօթ ենք հայրենանուէր եւ ազգօգուտ Ձեր գործերին, որոնք կենդանի վկայութիւն են առ Ապրուած ունեցած Ձեր հաւատի ու սիրոյ: Հոգու բերկրանքով ենք անդրադառնում, որ աւելի քան քառորդ դար, իբրեւ Տիրոջ Սուրբ Սեղանի բարեշնորհ սպասաւոր, Ձեր ծառայութիւնն էք բերում մեր Սուրբ Եկեղեցու նուիրական առաքելութեան իրագործմանն ու Կենաց Խօսքի տարածմանը:

Գովարժան են երկարամեայ Ձեր քաջեռանդ ջանքերը՝ ի խնդիր ամերիկահայութեան ազգային-եկեղեցական կեանքի զօրացման: Դուք՝ որպէս Ծխական խորհրդի անդամ, տարիներ շարունակ անձնուէր ծառայութիւն էք մատուցել Սագրամէնթոյի Սուրբ Յակոբ եւ Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս եկեղեցիների համայնքային կեանքից ներս: Գնահատելի են եկեղեցասէր հայորդուդ ազնիւ ընծայաբերումներն ի պայծառութիւն եւ ի բարօրութիւն առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի եւ Լա Քրէսէնթա Հովիտի Հայասպանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Նուիրեալ ու ծառայասէր Ձեր ոգու արժանի գնահատանքով բազմիցս ընտրուել եւ պաշտօնի էք կոչուել որպէս Արեւմտեան թեմի թեմական խորհրդի ատենապետ, որով պատասխանատու Ձեր կոչմամբ մշտապէս սատար էք կանգնել թեմի առաքելութեանը: Դուք սրտաբուխ Ձեր նուիրաբերումներով յամենայնի աջակից էք ԱՄՆ Արեւմտեան թեմի կողմից իրականացուող խնամակալութեան եւ բարեսիրական բազում այլ ծրագրերի՝ նախանձախնդիր լինելով, որպէսզի Միացեալ Նահանգներում բնակուող հարազատ մեր զաւակների հոգիներում շարունակի ապրել ու ծաղկել քրիստոնէական սուրբ հաւատն ու արթուն մնայ հաւատարմութիւնը հոգեւոր մեր արժէքներին:

Ուրախութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ Ձեր անունը ծանօթ եւ սիրելի է ամերիկաբնակ մեր ժողովրդին նաեւ որպէս առողջապահական ոլորտի նուիրեալ մշակի, ով իր գիտելիքներն ու տարիների տքնաջան աշխատանքով ձեռք բերած լայն հնարաւորութիւնները բազմիցս ծառայեցրել է հայ համայնքի կարիքների լուծմանն ի նպաստ: Այն հեղինակութիւնը, յարգանքն ու սէրը, որը վայելում էք Դուք Միացեալ Նահանգներում, արդար վաստակն է Ձեր ապրուածահաճոյ գործունէութեան:

Այսօր գոհունակութեամբ ենք անդրադառնում նաեւ որդիական սիրով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին բերած Ձեր բազմարդիւն ծառայութիւններին: Տարիներ շարունակ, լինելով ջանասէր եւ բանիմաց անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի, Ձեր կարելին էք բերում ի նպաստ ազգային-եկեղեցական կեանքի առջեւ յառնող խնդիրների լուծման: Նշանակալի է նաեւ ազնիւ բարերարիդ յօժարակամ աջակցութիւնը մեր Եկեղեցու հոգեւորականների պատրաստութեան նուիրական գործին:

Բարձր գնահատանքի արժանացնելով որդիական Ձեր սէրն ու նուիրումը հանդէպ մեր

Սուրբ Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը եւ սիրով ընդառաջ ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանիքի անդամներին քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն ու ազգօգուտ գործերի յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահպանի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ ազգս հայոց ի Հայրենիս եւ ի սփիւռս աշխարհի:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին Հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 826